| | | 4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ. | 1500<br>/ հազար հինգ հարյուր/ |
| | | 5)էլեկտրոնային էկրանի միջոցով արտքին գովազդ տեղաբաշխելու դեպքում **«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1500 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 1.5 գործակցի կիրառմամբ** | 2 250<br>/երկու հազար երկու հարյուր հիսուն/ |
| | | 6) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով. | 375<br>/երեք հարյուր յոթանասունհինգ/ |
| | | 7) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով: | 150<br>/հարյուր հիսուն/ |
| | Վաղարշապատ համայնքի կամ | | |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ | օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ. | 100 000 /հարյուր հազար/ |
| 17. | Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր | **«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 10 000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ** | 7 500 /յոթ հազար հինգ հարյուր/ |

| | | | |
|---|---|---|---|
| | մեքենայի համար՝ տասը հազար դրամ. | | |
| 18. | Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ | օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ | 500 000 /հինգ հարյուր հազար/ |
| 19. | Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ **«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 2 500 000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ** | 1 250 000 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ |
| | | 2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ. **«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 5000 000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ** | 2 500 000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ |
| | | 3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ. **«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի** | 3 500 000 /երեք միլիոն հինգ հարյուր հազար/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | **համաձայն 7000 000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ** | |
| | | 4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ, **«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 10 000 000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ** | 5 000 000 /հինգ միլիոն/ |
| 20. | Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ | օրացուցային տարվա համար հիսուն հազարից մինչև երեք հարյուր հազար դրամ. | 50 000 /հիսուն հազար/ |
| 21. | համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝ | Էջմիածին բնակավայրում կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի, շոգեբաղնիքի և մերսման սրահի (բացառությամբ բուժական մերսման սրահների) համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազարից մինչև քսան հազար ՀՀ դրամ, | 20 000 /քսան հազար/ |
| | | Ոսկեհատ բնակավայրում կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի, շոգեբաղնիքի և մերսման սրահի (բացառությամբ բուժական մերսման սրահների) համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազարից մինչև քսան հազար ՀՀ | 10 000 /տաս հազար/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | դրամ, | |
| | | Էջմիածին բնակավայրում հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամ, | 300 000 /երեք հարյուր հազար/ |
| | | Ոսկեհատ բնակավայրում հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազարից մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամ, | 100 000 /հարյուր հազար/ |
| 22. | համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ | մեկ քառակուսի մետրի համար՝ | 10 000 /տաս հազար/ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 2

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Վաղարշապատ համայնքի ավագանու

2023 թվականի դեկտեմբերի 27-ի

թիվ 104-Ն որոշմամբ

## *ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024Թ. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

| | **Տեսակը** | **Դրույքաչափը /սահմանված օրենքով/** | **Ավագանու կողմից սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամով/** |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | ***ՎՃԱՐՆԵՐ*** | |
| 1. | Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 20 000 /քսան հազար/ | |
| 2. | ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, | 50 000 /հիսուն հազար/ | |

| | | | |
|---|---|---|---|
| | ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | | |
| 3. | ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | | 50 000 /հիսուն հազար/ |
| 4. | համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | | 15 000 /տասնհինգ հազար/ |
| 5. | համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի | Մրցույթների մասնակցության համար | 20 000 /քսան հազար/ |

| | | | |
|---|---|---|---|
| | մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | Աճուրդների մասնակցության համար | աճուրդի դրված գույքի մեկնարկային արժեքի 1% |
| 6. | համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | օրական | 1000 /մեկ հազար/ |
| | | 1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է | |
| 7. | | 1) Էջմիածին բնակավայրում ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսունից մինչև չորս հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ | 250 /երկու հարյուր հիսուն/ |
| | | 2) Ոսկեհատ բնակավայրում ըստ | |

| | | | |
|---|---|---|---|
| | համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում. | հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսունից մինչև չորս հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ | 150<br>/մեկ հարյուր հիսուն/ |
| | | 2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով. | |
| | | 1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ. | 100<br>/հարյուր/ |
| | | 2) հյուրանոցային տնտեսության | 50<br>/հիսուն/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսանից մինչև հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ. | |
| | | 3) ֆինանսական և կապի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ. | 20 /քսան/ |
| | | Վարչակառավարչական և առողջապահության համար նախատեսված | 15 /տասնհինգ/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգից մինչև քսան Հայաստանի Հանրապետության դրամ. | |
| | | 4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեքից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ, | 3 /երեք/ |
| | | զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ. | 8 /ութ/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | 5) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչև տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ. | 15 /տասնհինգ/ |
| | | 6) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված, ինչպես նաև տարբերակված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, | համաձայն սույն հավելվածի 7-րդ մասին 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է «Աղբահանության և |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված առավել բարձր դրույքաչափով. |
| | | 7) շինություններում (այդ թվում՝ առանձնացված, ինչպես նաև տարբերակված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում | աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով. |
| | | 2.1.Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների համար | |
| | | ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի | 50 /հիսուն/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ: | |
| | | 2.2.Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, | |
| | | որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, | աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին: |
| | | 3. Ոչ բնակելի նպատակային նշանակության առնվազն 1000 քմ ընդհանուր մակերես զբաղեցնող շենքերում և (կամ) շինություններում և շենքերից ու շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային | |

| | | | |
|---|---|---|---|
| | | սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ մասին 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով և 2.1-ին կետով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ | |
| | | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ. | 10 000<br>/տաս հազար / |
| 8. | համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում | ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար | 10 000<br>/տաս հազար / |
| 9. | ոռոգման ջրի մատակարարման համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց | ջրապոմպի օգտագործման դեպքում ժամը | 2000<br>/երկու հազար/ |

| | | | |
|---|---|---|---|
| | փոխհատուցման վճարի չափով, | | |
| 10. | համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով. | բնակարանի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր ընդհանուր մակերեսի համար, ամսական | 17 /տասնյոթ/ |
| 11. | համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով. | Էջմիածին բնակավայրում ամսական | 10 000 /տաս հազար/ |
| | | Էջմիածին բնակավայրում երկարօրյա ծառայություն մատուցող հիմնարկում (10,5 ժամ) ամսական | 12 000 /տասներկու հազար/ |
| | | Ոսկեհատ բնակավայրում ամսական | 8000 /ութ հազար/ |
| | | այլ համայնքներից, ինչպես նաև մեկ բնակավայրից մեկ այլ բնակավայր Վաղարշապատ համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզ ՀՈԱԿ- | 20000 /քսան հազար/ |

| | | | |
|---|---|---|---|
| | | ներ այցելող երեխաների խնամքի համար | |
| | | այլ համայնքներից, ինչպես նաև մեկ բնակավայրից մեկ այլ բնակավայր Վաղարշապատ համայնքի ենթակայության տակ գտնվող երկարօրյա ծառայություն մատուցող (10,5 ժամ) մանկապարտեզ ՀՈԱԿ-ներ այցելող երեխաների խնամքի համար | 25000 /քսանհինգ հազար/ |
| 12. | համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով. | 1) <<Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ում սովորողների համար ամսական | 3000 /երեք հազար/ |
| | | 2) «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» և «Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ներում սովորողների համար, ամսական՝ | |
| | | լարային և ազգային նվագարանների բաժիններ | 3000 /երեք հազար/ |
| | | երկրորդ մասնագիտություն ստանալու նպատակով | 2500 /երկու հազար հինգ հարյուր/ |
| | | թավջութակի բաժին | |

| | | | |
|---|---|---|---|
| | | համար սահմանել արտոնություն՝ զրոյական դրույքաչափի կիրառումով | 0 /զրո/ |
| | | դաշնամուրային և կիթառի բաժին | 7000 /յոթ հազար / |
| | | մյուս բոլոր բաժիններ | 6000 /վեց հազար/ |
| | | գեղագիտական զարգացման գծով ուսումնառության համար | 10 000 /տաս հազար/ |
| 13. | համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատության (սպորտի դպրոցի) ծառայություններից օգտվողների | **ԼՈՂ** | |
| | | 1 օրվա, 1 պարապմունք | 2 000 /երկու հազար/ |
| | | 3-5 տարեկան երեխաների համար | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 12 000 /տասներկու հազար/ |
| | | 6-8 տարեկան երեխաների համար | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 8 000 /ութ հազար/ |
| | | 3 ամսվա, 36 պարապմունք | 22 000 /քսաներկու հազար/ |
| | | 6 ամսվա, 72 պարապմունք | 42 000 /քառասուներկու հազար/ |
| | | 12 ամսվա, 144 պարապմունք | 80 000 /ութսուն հազար/ |
| | | 8-12 տարեկան երեխաների համար | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 10 000 /տաս հազար/ |
| | | 3 ամսվա, 36 պարապմունք | 25 000 /քսանհինգ հազար/ |
| | | 6 ամսվա, 72 պարապմունք | 55 000 /հիսունհինգ հազար/ |

| | | | |
|---|---|---|---|
| | համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով. | 12 ամսվա, 144 պարապմունք | 100 000 /հարյուր հազար/ |
| | | 12-16 տարեկան երեխաների համար | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 14 000 /տասնչորս հազար/ |
| | | 3 ամսվա, 36 պարապմունք | 38 000 /երեսունութ հազար/ |
| | | 6 ամսվա, 72 պարապմունք | 75 000 /յոթանասունհինգ հազար/ |
| | | 12 ամսվա, 144 պարապմունք | 140 000 /հարյու քառասուն հազար/ |
| | | 16 տարեկանից բարձր անձանց համար | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 18000 /տասնութ հազար/ |
| | | 3 ամսվա, 36 պարապմունք | 50000 /հիսուն հազար/ |
| | | 6 ամսվա, 72 պարապմունք | 95000 /իննսունհինգ հազար/ |
| | | 12 ամսվա, 144 պարապմունք | 180000 /հարյուր ութսուն հազար/ |
| | | Անհատական պարապմունքների համար /2-ից 3 մարդ/ | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 40000 /քառասուն հազար/ |
| | | Առողջական խնդիրներ ունեցող երեխաների խմբակային պարապմունքների համար | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 15000 /տասնհինգ հազար/ |
| | | Առողջական խնդիրներ ունեցող մեծահասակների խմբակային պարապմունքների համար | |
| | | 1 ամսվա, 12 պարապմունք | 20000 /քսան հազար/ |

| | | |
|---|---|---|
| 14. | համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | 20 000<br>/քսան հազար/ |
| 15. | համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով | 0<br>/զրո/ |
| 16. | համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) | 0<br>/զրո/ |

| | | | |
|---|---|---|---|
| | ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից. | | |
| 17. | համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար՝ մեկ փաստաթղթի համար. | 1000<br>/մեկ հազար/ | |
| | | Ժամկետային կամ պայմանագրային զինվորական ծառայություն իրականացնելու ժամանակ զոհված կամ վիրավորված զինծառայողների կամ նրանց հավասարեցված անձանց ընտանիքների համար | 0<br>/զրո/ |
| 18. | համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման վճարի չափով | 1500<br>/մեկ հազար հինգ հարյուր/ | |
| | համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի | 10 000 /տաս հազար / | |

| | | |
|---|---|---|
| 19. | տրամադրման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | |
| 20. | համայնքի տարածքում պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներից բխող՝ համայնքի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի չափով: | 1000<br>/մեկ հազար/ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում տեղական տուրքերը և վճարները /օրենքի նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածում/: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին, 11-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական տուրքերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ տեղական վճարների դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև կիրառելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջները՝ որոշման նախագծով սահմանվել են Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված են, ըստ տուրքերի տեսակների, տուրքերի նվազագույն և առավելագույն դրույքաչափերը:

Վաղարշապատ համայնքում տեղական վճարների տեսակները սահմանված են, ըստ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով:

Նախագծում, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի մեջ մտնող բնակավայրերի առանձնահատկությունները, կիրառվել են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված դրույթները:

Ելնելով ներկա սոցիալ-տնտեսական վիճակից, նպատակ ունենալով աջակցելու և մեղմացնելու համայնքում պաղպաղակի բացօթյա առևտրով զբաղվող տնտեսվարողների, տնային կենդանիներ պահող անձանց ու մարդատար-տաքսու ծառայություններ մատուցող անձանց սոցիալական վիճակը և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը, ավագանին իր այս նախագծով որոշել է նաև.

թիվ 1 հավելվածի 11-րդ կետով սահմանված համայնքի վարչական տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ պաղպաղակի բացօթյա առևտրի տուրքի դրույքաչափը նվազեցնել՝ կիրառելով 0.5 գործակիցը,

թիվ 1 հավելվածի 14-րդ կետով սահմանված համայնքի վարչական տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվության համար սահմանել արտոնություն՝ տուրքի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումով,

թիվ 1 հավելվածի 17-րդ կետով սահմանված համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրենքով սահմանված տուրքի դրույքաչափը նվազեցնել՝ կիրառելով 0.75 գործակիցը:

թիվ 2 հավելվածի 12-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված համայնքի կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ սահմանվել է արտոնություն՝ վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառումով:

Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման ընդունման անհրաժեշտության վերաբերյալ Վաղարշապատ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել և դրույքաչափերը սահմանվել են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

2024 թվականի համար համայնքում սահմանված տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ ավագանու համապատասխան որոշումը ընդունելուց հետո կիրականացվի բյուջեի կազմման եկամտային մասի ճիշտ պլանավորումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

| 1. Արդարադատության նախարարություն | 27.12.2023թ.<br>№/27.1/55100-2023 գրության |
|---|---|
| 1.<<Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին>> Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրի <<Վաղարշապատ>> բառից առաջ անհրաժեշտ է լրացնել <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի>> բառերը: | Ընդունվել է |
| 2. Նախագծի 1-ին հավելվածում անհրաժեշտ է վերանայել կետերի համարակալումը՝ բացառելով լրացուցիչ համարների կիրառումը՝ հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: | Ընդունվել է |
| 3. Նախագծի 1-ին հավելվածի 1.1 կետից անհրաժեշտ է հանել <<(եթե սույն հոդվածի 4.1-ին մասով այլ բան սահմանված չէ)>> բառերը: | Ընդունվել է |
| 4. Նախագծի 1-ին հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի <<օրենքի իմաստով>> բառերի փոխարեն անհրաժեշտ է նշել, որ խոսքը <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի մասին է: | Ընդունվել է |